



Թու՛մ էր, թէ եթէ չընդունւի, գոնէ ուշադրութեան և քննութեան կանուի այն առաջարկը, որը արաւ պ. Ի. Անանունը «Մամուլի» մէջ՝ տպագրութեան առաջիկայ 400-ամեակը տօնելու համար:

Նա առաջարկում է, հրաւիրել գրականագէտների և ժուրնալիստներին համագումար, հիմնել պատւի դատարան, կազմակերպել գրական ֆոնդ, իրենց գրականագէտներից և լրագրողներից կազմած մի մարմնի յանձնել այդ գործը և ապա հիմնել ժուրնալիստների դասընթացներ:

Ինչպէս տեսնում էք, բոլոր առաջարկներն էլ թէ համապատասխան են 400-ամեակը տօնելու գաղափարին և թէ, մտնաւանդ, մօտ են գրականագէտների արտին, նրանց իղձերին և միակ փափագին, որ նրանք, իբրև դասակարգ, կարող են ունենալ:

Սակայն տեսէք, որ մեր մամուլը արձագանք էլ չտւեց այդ առաջարկներին, նա չուզեց քննել և ապացուցանել թէկուզ գրանց բոլորի անհնարինութիւնը, կամ գուցէ զնասակարութիւնը:

Մտքով թամբալ և ծերացած, ուղղութեամբ մի շարուն կաղապարի վերայ մեծացած մեր գրական և ժուրնալիստ դիրիժօրներին համար միանգամայն անմարսելի է թւում այն բանը, թէ իրենք պիտի տնօրինեն իրենց բախտը, իրենք պէտք է ձեռք առնեն իրենց կարիքների և պահանջներին բաւարարութիւն տալու առաջնակարգ գործը:

Նրանք չեն հաշուում այն մտքի հետ, թէ կարելի է, մարդ կարող է իր վիճակը տնօրինել և առանց պ. Սամսոն Յարութիւնեանի:

Նրանք չեն հաշուում այն մտքի հետ, թէ մի տնանկի, մի քանի ան-

պաշտպան որբերի խնամակալիլը, նը-  
րանց բարերարելը բնաւ նման չպիտի  
լինի այն փոխադարձ օգնութեանը, ո-  
րին կարօտ են Ֆիզիքսպէս անողջ,  
չափահաս, հասունացած մտքի տէր և  
աշխատելու ընդունակ աշխատաւոր-  
ները:

Հեռեկապէս հեռու պէտք է լինել  
այնպիսի մի հիմարկութիւնից, որ-  
տեղ սրտով և զգայմունքներով շատ  
լաւ մարդիկ կարող են նստած լինել,  
բայց որոնց բարերարութիւնը և խնա-  
մակալութիւնը պատիւ չպիտի բերի  
գրականագէտներին և ժուրնալիստնե-  
րին:

Իսկ սրանց գործը իրենք պիտի տը-  
նօրինեն և երբէք ազգային փոթրաւ-  
չիների ձեռքը չպիտի ընկնի:

Ես չեմ արհամարհում բարեգործու-  
թիւնը, ես հաւատացած եմ, որ եթէ  
նոյն իսկ ապագայ գրական Ֆօնդը  
իրենց—գրականագէտների ձեռքին լի-  
նի, նոյնպէս կը գտնուեն բարերար-  
ներ, որոնք կը նւիրեն այդ Ֆօնդին  
գումարներ ընդհանուր և կամ յատուկ  
պայմաններով:

Մեզնում մինչև այժմ, դժբաղդա-  
բար չէ հասունացել նոյն միտքը, թէ  
կարելի է լինել տարբեր ուղղութիւն-  
ների տէր գրողներ, բայց դասակար-  
գային խնդրում միշտ համամիտ նոյն-  
պէս և դասակարգային շահերը պաշտ-  
պանելու խնդրում:

Կայ մի բանակ, որի համար, դի-  
ցուք, պ. Գարեգին Ենգիբարեանը  
կամ Տէր-Եղնիկը, ինչպէս գրականա-  
գէտներ կամ ժուրնալիստներն միշտ  
արհամարանքի են արժանանում,—  
այդ իսկ բանակի համար, դի-  
ցուք պ. Հ. Մելիքեանը կամ պ. Ս.  
Յարութիւնեանը անյարմար բարեկամ-  
ներ են լրագրութեան, մամուլի...

Եւ սրանց է, որ կամենում են յանձ-  
նել գրականագէտների, ժուրնալիստ-  
ների, եթէ կարելի է այսպէս ասել,—  
բաղդը, վիճակը:

Սրանց պէտք է դիմի հայ հիւանդ  
գրագէտը կամ գործի կարօտ ժուր-  
նալիստը, իր նեղ օրերում և, կը բաշ-  
խէք, ընթերցող, եթէ սրանց դունքի  
զանգերը յաճախ փչանան, տասը ան-  
գամից մէկ անգամ քեզ ընդունեն և  
այլն:

Եւ գոհ կը լինեն հայ մտքին այժ-  
մեան ուղղութիւն տւող թամբալ դե-  
րիժօերները, և գոհ կը լինեն մեր  
ինքնակոչ-խնամակալ փողրաթչիները,  
հանգիստ կը լինի «հասարակական»  
խիղճը՝ կատարած լինելով իր «բարո-  
յական» պարտականութիւնը:

Գոհ կը լինի, ինչ խօսք, և այն դա-  
սակարգը, որի համար այսօր փող-  
րաթչիաբար մտածում և հոգում են  
մեր «բարեգործները»...